

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ, Տաղեր. աշխատասիրություն Վրամենուհի Սրապյանի, Հայկական ՍՍԹ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1962, 300 էջ, գինը 94 կ.:

Կոստանդին Երզնկացին հայկական միջնադարյան քնարերգության ամենախոշոր դեմքերից մեկն է: Ընդհատ է, դեռես Գրիգոր Նարեկացու գրչի տակ յուրահատուկ ձևով սկզբնավորվում էր աշխարհիկ ըմբռնումների գեղարվեստական վերարտադրման դարագլխային երևույթը, բայց այն իր ամենացայտուն դրսևորումը գտավ Կոստանդին Երզնկացու մոտ:

Սղրաբ մի կան հետ մեզ սիրով,
Աշխարհի բան ուզեն գրողով,
Կայ ես վասն այն յայտնի ձայնով
Սիրու բուներս ասցի յուղով...

Թերևս նաև այդ իմաստով էր, որ նա իր երգերից մեկում, բազմանշանակ խորհրդավորությամբ ազգարարում էր.

Ահա գիւերս էանց,
Նշան ելն առաւօտուն...

Կոստանդին Երզնկացու բանաստեղծությունները շնայած դեռևս 1848 թվականից առանձին-առանձին, իսկ 1905-ից ամբողջական գրքով տպագրվել և ժանոթ էին ընթերցողին ու մասնագետներին, սակայն նրանց գիտական վերահրատարակության կարիքը վաղուց էր զգացվում: Այդ գործի անհրաժեշտությունը պայմանավորված էր, ամենից առաջ, նշված հրատարակության վաղեմիությամբ. բավական է հիշել, որ Հայաստանում այդ գրքից այժմ կարելի է գտնել ընդամենը մեկ կամ երկու օրինակ: Բացի դրանից, այդ հրատարակության մեջ տեղ են գտել առանձին շփոթություններ, որոնք սպասում էին մասնագիտական նոր վերարժեքման: Վերջապես, կարիք կար, որ ի մի բերվեին այդ մեծ բանաստեղծի մասին եղած բանասիրական աշխատանքների նվաճումները, և նրա ստեղծագործությունները երևան հանվեին նոր ու հանգամանալից հետազոտությամբ: Ահա այդ շնորհակալ աշխատանքին է, որ ձեռնարկել է բանասիրուհի Արմենուհի Սրապյանը:

Հենց սկզբից նշենք, որ այդ աշխատության նշանակությունը, իր ընդգրկումների շնորհիվ, դուրս է եկել տվյալ հեղինակին ներկայացնելու սահմաններից և ընդհանուր գծերով պատկերել է նաև պատմական Երզնկայի ու Եկեղյաց գավառի XIII—XIV դարերի մշակութային կյանքն ու իրականությունը:

Ձեռքի տակ ունենալով մինչև օրս տպագրությամբ հայտնի համապատասխան բոլոր փաստերը, ինչպես նաև Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում գտնվող շրջագործված նյութերը, հեղինակը կարողացել է ստեղծել արժեքավոր ու ավարտուն մի գործ: Այն բաղկացած է երեք հիմնական մասերից. ա) Ուսումնասիրություն, բ) Բնագրեր, գ) Մանրագրություններ, լրացուցիչ տեղեկություններ:

Ուսումնասիրության մեջ բավականին հանդամանորեն տրված է ժամանակի քաղաքական ու տնտեսական պայմանների ուրվագիծը, այդ ֆոնի վրա՝ Կոստանդին Երզնկացու երգերի վերլուծությունն ու գնահատականը, ապա՝ նրա կյանքի ու գործի ընդհանուր պատկերը:

Ձեռնամուխ լինելով մեր միջնադարյան այդ մեծ բանաստեղծի երգերի հետազոտմանը, Ա. Սրապյանը կարողացել է յուրովի թափանցել նրա ստեղծագործությունների էության խորքը և ասել իր խոսքը: Այդ հետազոտությունն առանձին թարմություն է ստացել Երզնկա քաղաքի կյանքում մեծ դեր խաղացած «եղբայրություններին» նվիրված էջերի շնորհիվ, որոնց ներքին հարաբերություններն էլ հենց, հիմնականում, պայմանավորել են բանաստեղծի հասարակական ու քաղաքական կերպարանքը: Թարմ են նաև Երզնկայի այն ժամանակվա ազանդավորական խմբավորումներին վերաբերող մեկնարանությունները:

Պատմական իրականության այս և այլ կոնկրետ հանդամանքների լույսի տակ է, որ Ա. Սրապյանը գծում է Կոստանդին Երզնկացու կերպարը, տալով նրա երգերի բոլոր էական էրերանգների վերլուծությունը: Այստեղ նրան, առաջին հերթին, զբաղեցրել են բնության գեղարվեստական վերարտադրությանը նվիրված այն գողտրիկ էջերը, որոնցով, իրոք, Կոստանդին Երզնկացին այնքան հմայիչ է ու ինքնատիպ:

Նեզ ուրտայ ամբ ցալարեր,
Կամար կապի յերկինս ի վեր,
Հոսէ յերկիր ահեղ գետեր,
Հասար գերկիր են աբուցել...

Ա. Սրապյանը ևս, իրավամբ, համանման երգերում և հատկապես վարդի ու սոխակի մոտիվներում տեսնում է կրոնական միջուկը, կայն նա ձգտում է վեր հանել այն նորն ու կարևորը, որ բերում էր Կոստանդին Երզնկացին: Բանաստեղծության այդ ուղին, անշուշտ

ներ չէր և, տարրեր կրանգներով, գալիս էր հնից, սակայն Կոստանգին Սրգնկացին այն հասցրեց իր գարդացման գազաթնակետին, որից «հետո արգեն թիչ բան էր մնում ուղղակի անգնելու վայելքի, ուրախության, գինու և կնոջ գովքին», որը իրագործում է «ղարձյալ Սրգնկացին»։ Այս անցումով հետազոտողը տալիս է Կոստանգին Սրգնկացու սիրո կրկերի գնահատականը։

Հատուկ բնության են առնված բանաստեղծի ստեղծագործություններում առկա հասարակական տրամադրությունները, ուր շեշտը գրված է կրգչի՝ որպես առաջավոր մտածողի կերպարի վրա։

Բնագրերի բաժնում գետնիցված են Կոստանգին Սրգնկացու անունով հայտնի բոլոր կրգերը՝ առանց բացառության, ինչպես նաև նրան վերագրվածները, Այստեղ նորությունն այն է, որ ԼԹԵ մինչև օրս գրանք ներկայացված էին, հիմնականում, մեկական կամ երկուական ձևազրկերի հիման վրա, ապա այժմ հանգիստում ենք նույնիսկ 5—6 ձևազրկերի օգտագործմամբ տպագրված բնագրերի։ Մ. Պոտուրյանը ցավով է նշել, որ այն ժամանակվա էջմիածնի Մատենադարանում չէին հայտարարված Կոստանգին Սրգնկացու տաղերի ընդօրինակությունները։ Ա. Սրապյանի ներկա հրատարակությամբ լրացված է այդ բացը։ Ուշագրավ է նաև մի քանի բնագրերի նկատմամբ Ա. Սրապյանի ցուցաբերած վերաբերմունքը։ Այսպես, օրինակ, նա իրավացիորեն գրքից դուրս է թողել «Յևտ ընկութանց դատաստանին» տողով սկսվող բանաստեղծությունը, որի Առաջին Սյունեցուն պատկանելի լրիվ ապացուցված է և վեր է ամեն կասկածից։ Ծիշտ է վարվել նա՝ «Այսօր (Ահա) եղև պայծառ գարուն» տողով սկսվող սրգը չհամարելով համանման սկիզբ ունեցող մի այլ կրգի տարրերակր՝ ինչպես վարվել էր Մ. Պոտուրյանը և այլն։

Բնագրերի բաժնին հաջորդող ծանոթագրությունները, բառարանը, ինչպես և Հ. Անասյանի կազմած «Մատենագիտությունը» մեծապես օգնում են Կոստանգին Սրգնկացու տաղերի մասին առավել ամբողջական պատկերացում կազմելուն։

Կոստանգին Սրգնկացու «Տաղեր» ժողովածուն նարավորություններ է ստեղծել նորանոր հարցադրումների համար։ Այսպես, օրինակ, Սրգնկայում եղած աղանդավորական խմորումների վերաբերյալ արված գիտությունները մղում են մտածելու—արդյոք նրանց արձագանքը չկա՞ Կոստանգին Սրգնկացու բանաստեղծություններում։ Այս ուղղությամբ մեր արած որոնումները համոզում են, որ, իրոք, այնտեղ կան նաև համապատասխան արձագանքներ։

Ուշագրավ է, օրինակ, հատկապես Գ տաղը, որի սկսվում է «Ահա գիշերս էանց» տողով։ Այդտեղ մի կողմից գովք է ասված Հայր աստուծու և Քրիստոս Որդու մասին՝ ի դեմս «Արև-գական և իր լուսոյն» (որի առավել համոզիչ բացատրությունը տվել է Մ. Արեղյանը), իսկ մյուս կողմից քննադատված են մարգիպ, որոնք Արևի և նրա լուսի, այսինքն, Հայր և Որդի աստվածությունների փոխարեն պաշտել են Հոգու գաղափարը։ Հեղինակն այսպես է հակադրում նրանց՝ տալով նաև իր դավանանքը.

Ումնք ևն անհոգի,
աչբերով կուր և անյիմայ,
Որ շնք ի հաւատայ
արեգանան ու իր լուսոյն.
Խաւսը կենցօք կենան
ու գմբալին Երազ բնոյ.
Չունին մասրն լուսոյ՝
յարեգական ի մեծ լուսոյն:
Եւ շնք ի հաւատայ
այն սուտ հոգոյն, քլ ինքն լոյս.
Որ շունի շառանդ
յարեգական ի մեծ լուսոյն...

Որ իսկապես հեղինակի ուշադրության կենտրոնում եղել է Հոր և Որդու հարցը, պարզ երևում է նաև կրգի խորագրից. «Բանք յաղագս արեգականն արգարութեան, որ և ծագեաց ի Հօրէ միածին Որդին Քրիստոս, զոր առակօր խօսի»։ Ինչու այստեղ չկա Հոգու գաղափար, ի՞նչ դեր է հատկացված եղել «Այն սուտ Հոգույն, թէ ինքն լոյս», դավանարանական-աղանդավորական ի՞նչ ուղղություններ կան այստեղ.—մնում է բացատրելու Բանաստեղծի մերժած ուղղությունը կարծես հիշեցնում է գրքի ուսումնասիրության մեջ փաստարկված «Գորգեցուց» աղանդը, որին հետևողները, ըստ Մրխիթար Ապարանեցու, «ուրացան գժրորդութիւնս անձանցն... և ասէին վասն Քրիստոսի, եթէ ինքն է Հայր, ինքն է Որդի և ինքն Հոգին սուրբ...»։

Մեր կարծիքով, համանման երևույթի արտացոլք կա նաև «Բան յաղագս շար ընկերաց և պատրաստ կալ մոլորիցուցիչ ոմանց...» խորագրով բանաստեղծության մեջ, ուր այդ «մոլորեցուցիչ»-ները նմանեցված են գառան մորթի հագած գայլերի կամ խարերա բժիշկների, որոնք «յափշտակում» են հավատացյալների հոգիները.

Ով է վայլ-նա գտուն ևկել,
յաչրս մաւրդկան ինքն ւսմար.
Նա յրջի հետ դառնեւուն,
յափշտակէ հետ գաղտարար.

Կէսք մ' են բժիշկ եղել,
բէ զեղ դիտեմ ի իստ օգտակար,
եսգին զառողջն ի սիրտն,
ու հիւրնդին են մահաբար...

Ըսկ որ խոսքը նույն համայնքի ներսում եղած գաղափարական-դավանարանական պայքարի մասին է, այդ հստակ երևում է նաև հետևյալ տողերից.

Գլուխք լինին շատոնց,
անուն եղել իր էլքիար.
Կուրի առաջնորդ է
և ինքն այլ կուր ու խիստ խաւար.
Ունին նարտար լեզուս
ու շորքունեւ քաղցրարարառ...

Ժամանակին այդպես էին բնութագրվում նաև թոնդրակեցիները և նրանց գաղափարակիցները: Այստեղից միաժամանակ հասկանալի է դառնում, թե ինչու՞ նախքան վերոհիշյալ ուղղությունների հանգամանակից ուսումնասիրությունը, չի կարելի գեթ այդ երգերում մեղադրվածներին այսօր էլ որակել «տգետ», «յիմար», «խավարամիտ» և նման ուրիշ բառերով, ելակետ ունենալով լոկ հեղինակի դիրքորոշումը: Համապատասխանարար ճշգրտման կարիք ունի նաև «գիտուն» կամ «իմաստուն» հասկացությունների մեկնարանությունը՝ ոչ միայն Կոստանդին Երզնկացու, այլև մեր միջնադարյան ուրիշ երգիչների որոշ ստեղծագործությունների կապակցությամբ:

Գրքում կան նաև բնագրագիտական բնույթի ուշագրավ հարցադրումներ: Օրինակ, անդրադառնալով Ն. Ակինյանի կողմից 1915 թ. տպարկված և Կոստանդին Երզնկացու նետ առնչվող սի բանաստեղծության (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1915, էջ 64—69), Ա. Սրապյանը կատարել է կարևոր մի ճշգրտում (տե՛ս «Տաղեր», էջ 97—98), որը հիմք է տալիս էլ ավելի խուլանալ այդ բանաստեղծության ուսումնասիրության մեջ և հանգել նոր եզրակացության: Խոսքը վերաբերում է նշված գործի ակրոստիքոսին. «Կոստանդին ահացեսլ Եզնկացո ողբանէ», ուր, ինչպես տեսնում ենք, աղավաղված է «ախագեսլ» բառը: Ն. Ակինյանը, նկատի առնելով այն հանգամանքը, որ այդ բանաստեղծության վերջին տողերից մեկում առկա է «Մխիթար» անունը, ենթադրել է, թե վերջինս ողբանքի հեղինակն է, իսկ ողբանքը գրված է Կոստանդին Երզնկացու մահվան առիթով: Ըստ այլմ էլ նա ակրոստիքոսի «ահացեսլ» բառն ուղղել է որպես «հայցեսլ»: Ա. Սրապյանը իրավացիորեն առարկում է սույն ուղղմանը, փաստարկելով և համոզելով, որ այդտեղ պիտի տեսնել ո՛չ թե «հայցեսլ», այլ «ասացեսլ» բառը: Ցավոք նա չի խորացել իր այս շտկման

մեջ, որի շնորհիվ պարզվում է, որ Կոստանդին Երզնկացին ոչ թե այդ ողբանքի հայցողն է, այլ ասացողը, այսինքն հեղինակը: Առանձին բնություն կարիք ունեցող այս եզրակացությունն ապացուցվում է նաև այլ փաստերով, ուստի և Կոստանդին Երզնկացու բանաստեղծությունների թիվն ավելանում է ես մեկով:

Այժմ անդրադառնանք «Տաղեր» ժողովածուում մեր նկատած թերություններին և լրացման կարոտ կետերին:

Մեր կարծիքով, ուսումնասիրության բաժնի մեծ թերությունն այն է, որ այդտեղ լիարժեք գնահատության չեն արժանացել Կոստանդին Երզնկացուն ներկայացնող նախորդ մասնագետների աշխատանքները, հատկապես Մ. Պոտուրյանի կատարած հրատարակությունը: Իժարատար այս երևույթը ավանդական ուժով առկա է նաև համանման ուրիշ հրատարակությունների մեջ: Այնուհետև, այլարանական բնույթի երգերի գնահատման ժամանակ երբեմն նկատվում է նրանց կրոնական բովանդակության մասնակի անտեսում, որը նույնպես անհարկ է: Թվում է, թե ավելի բան տրամաբանական կլիներ՝ Կոստանդին Երզնկացու կենսագրության մասին խոսել այս բաժնի սկզբի մասում և ոչ թե վերջում:

Բնագրերի բաժնի էական թերությունն այն է, որ այդտեղ գետնեղված երեք երգերի («Այսօր [Ահա] եղև պայծառ գարուն», «Ահա հոտըն դար գարնան», «Հոգի», աչերուս իմ լոյս») Կոստանդին Երզնկացուն պատկանելը ոչ անցյալում և ո՛չ էլ հիմա համոզիչ կերպով չի ապացուցված: Ծիշտ է, Ա. Սրապյանը «Բանասիրական դիտողություններ» վերնագրի տակ փորձել է տալ համապատասխան փաստարկումներ, սակայն դրանք հենված են բնագրային նմանությունների վրա (այն էլ մեծ մասամբ նեոավոր նմանություններ են), որպիսիք ավելի շուտ նախընտրվում են տարբեր հեղինակների մոտ: Եթե այդ եղանակը ճիշտ լիներ, ապա այդ եղանակով ավելի դյուրին կլիներ ապացուցել, որ «Ահա հոտըն գար դարնան» երգը պատկանում է նաև Պարկավագին (նույնացված՝ Մկրտիչ Նաղաշի նետ), որովհետև նրանց առնչություններն անհամեմատ ավելի ակներախ են. այսպես, նաղաշ Սարկավագի մոտ կարգում ենք (տե՛ս «Արարատ», 1900, էջ 46).

Ահալ հոտըն գար գարնան,
Փեսին տեսն էր խիստ խրսղման.
Յորտեղ սիրելիք որ կան՝
Ամէնն ի կարսնիք բող գաս...
Այսօր է մեզ օր խրնդման,
Հաւսար սիրելիքս որ կան...

Կոստանդին Նրզնկացուն վերագրվող վերոհիշյալ երգում, համապատասխանաբար առկա են.

Ահա հոտըն գար գարնան,
Իւր տեսն երեւի խրնդման...
Ուրտեղ որ սիրու տէր կան՝
Ամլնն մեծի մօտ բող գան...
Այսօր է մեզ օր խրնդման,
Հաւսար սիրելեացդ որ կան...

Կարծում ենք, որ մատնանշված երեք երգերը ժողովածուում պիտի զետեղվեն առավելին հավելվածի կարգով: Եվ պատահական չէ, որ բազմաձևուտ Մ. Արեղյանը իր ուսումնասիրության մեջ շրջանցել է հենց այդ բանաստեղծությունները:

Քննադրերի համեմատության ժամանակ հարկ չկար հիմնական աղբյուրին զուգահեռ տալ նաև այդ նույն աղբյուրից արած այս կամ այն ընդօրինակության տարբերությունները: Այդպիսիք են, օրինակ, Կ. Կոստանյանցի արխիվում եղած ընդօրինակությունները «Բազմավեպ»-ից և Մ. Պոտուրյանի «Հրատարակչությունից», որոնք օգտագործված են Ա. Սրապյանի կողմից բաղդատության համար: Նույնը կարելի է ասել նաև «Մոտոդյան» կոչված ձեռագիր տաղարանի և նրանից Մ. Պոտուրյանի կատարած ընդօրինակությունների վերաբերյալ և այլն:

Նկատվում են նաև, այսպես կոչված, մանր թերություններ, օրինակ, է երգի խորագրում «սարմնաուրաց» բառը ճիշտ չի վերականգնված ոչ Ա. Սրապյանի, ոչ էլ Մ. Պոտուրյանի

կողմից. ըստ իմաստի այն պիտի ունենար «մարմնաուր» ձևը: Պետք չէր «նայ» բառի վերջին տառից խուսափել, որովհետև այն՝ «բայց», «սակայն» և նման այլ բառերի իմաստով ընկալվելու փոխարեն, կարող է շփոթվել «նա» դերանվան հետ: Բառարանում սխալ է բացատրված «սիֆաթ» բառը, որն իբր թե մշանակում է. «երես, դեմք, կերպարանք», որով այն նույնացվել է «սուրաթ» բառի հետ, որն իբր նշանակում է «երես, դեմք» (անշուշտ, նաև կերպարանք): Հեղինակի մոտ գրանք միանգամայն ճիշտ առումով են օգտագործված և ունեն բոլորովին հակադիր իմաստներ. «սուրաթ»-ը մարդու արտաքինի, իսկ «սիֆաթ»-ը ներքինի գաղափարն է դրսևորում:

Ի սուրարքն մի՛ նայիլ,
որ յերևան կայ և յայտնի.
Սիֆաթին առա մրտիկ,
որ է խորին անգիտելի...

Նույնն է հաստատում նաև «սուրաթ են բէսիֆաթ» դարձվածքը:

Անկախ այս ամենից, Ա. Սրապյանի գրախոսվող աշխատանքը մնայուն և արժեքավոր մի հատոր է, որից, ավելի ամբողջական, բան որևէ այլ աղբյուրից, մեզ է ներկայանում հայ միջնադարյան աշխարհիկ գրականության խոշոր հիմնադիրներից մեկը՝ Կոստանդին Նրզնկացին:

Ա. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր

B. BRACHMANN, *Russische Sozialdemokraten in Berlin 1895—1914. Mit Berücksichtigung der Studentenbewegung in Preussen und Sachsen*, Berlin, «Akademie Verlag», 1962, 216 S.

В. БРАХМАН, *Русские социал-демократы в Берлине в 1895—1914 годах. С учетом студенческого движения в Пруссии и Саксонии*, Берлин, 1962.

Научная разработка деятельности русских революционных социал-демократов во главе с В. И. Лениным в годы эмиграции имеет актуальное значение для международного коммунистического движения. Изучение этой проблемы показывает самые широкие интернациональные связи и интернациональную солидарность большевизма со всеми другими передовыми отрядами рабочего класса. Говоря о значении русской революционной эмиграции, В. И. Ленин в 1920 г.

писал: «Благодаря вынужденной паризмом эмигрантские революционная Россия обладала во второй половине XIX века таким богатством интернациональных связей, такой превосходной осведомленностью насчет всемирных форм и теорий революционного движения, как ни одна страна в мире»¹.

¹ В. И. Ленин, Полн. собр. соч. Т. 41, стр. 8.